ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<17 >> հուլիսի 2018թվական N 76 -Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լաուրա Վահանի Սիմոնյանի դիմումը , որով նա ցանկություն է հայտնել օրինակեցնել սեփականության իրավունքով իրեն պատկանող 12-րդ փողոց, թիվ 51 հասցեի տնամերձ հողամասում / ծածկագիր 07-043-0128-0207 / գտնվող շինությունները :

Համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ քաղաքացի Լաուրա Վահանի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 12-րդ փողոց, թիվ 51 հասցեի տնամերձ հողամասում 2014թվականին կառուցվել է՝

1) ինքնակամ բնակելի տուն Sարտ=234.8 քմ, 2) ինքնակամ ծածկ Sարտ= 12.0 քմ,3)ինքնակամ պարիսպ S= 12.5 քմ :

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11,13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը , որ քաղաքացի Լաուրա Վահանի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 12-րդ փողոց, թիվ 51 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ՝***

1. Քաղաքացի Լաուրա Վահանի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 12-րդ փողոց, թիվ 51 հասցեի տնամերձ հողամասում կառուցված 1) ինքնակամ բնակելի տուն Sարտ=234.8 քմ, 2) ինքնակամ ծածկ Sարտ= 12.0 քմ,3)ինքնակամ պարիսպ S= 12.5 քմ մակերեսներով շինությունները համարել օրինական :

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի 523 950 (հինգ հարյուր քսաներեք հազար իննհարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հուլիսի17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հուլիսի 2018 թվական N 76-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչներ Արփիկ Վարդանյանի ,Հարություն Պողոսյանի և Պետրոս Թովմասյանի դիմումները օգնության մասին , հաշվի առնելով նրանց ընտանիքների սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, ***որոշում եմ՝***

1. Մայակովսկի համայնքի 2018 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տալ դրամական օգնություն.
   Արփիկ Վարդանյանին - 30 000 / երեսուն հազար/ դրամ,
   Հարություն Պողոսյանին - 25 000/ քսունհինգ հազար/ դրամ,
   Պետրոս Թովմասյանին -20 000/ քսան հազար/ դրամ,
   Ընդամենը 75 000 / յոթանասունհինգ հազար/ դրամ :

2.Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հուլիսի 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հուլիսի 2018 թվական N 77-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչներ Լևոն Ազատյանի և Աշոտ Բադալյանի դիմումները այն մասին, որ նրանք ունեցել են յուրաքանչյուրը՝ զույգ տղաներ,ինչպես նաև Գագիկ Շահինյանի դիմումը ֆինանսական օգնության մասին, հաշվի առնելով նրանց ընտանիքների սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, ***որոշում եմ՝***

1. Մայակովսկի համայնքի 2018 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տալ դրամական օգնություն.
   Լևոն Ազատյանին -25 000/ քսանհինգ հազար/ դրամ,
   Աշոտ Բադալյանին -25 000/ քսանհինգ հազար/ դրամ,
   Գագիկ Շահինկանին -30 000/երեսուն հազար/ դրամ,
   Ընդամենը 80 000 / ութսուն հազար/ դրամ :

2.Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հուլիսի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հուլիսի 2018 թվական N 78-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 17-րդ հոդվածի ,որոշում եմ '

2018 թվականի հուլիսի 31-ին ժամը 11.00-ին գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1. Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հուլիսի 30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» օգոստոսի 2018 թվական N 79-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 01-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին » օրենքի 33-րդ հոդվածի ,ի կատարումն Կոտայքի մարզպետի 2018թվականի օգոստոսի 1-ի N 01/15.1/3807-18 գրության որոշում եմ '

1. Համայնքի ղեկավարի 2007թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրիապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքապետարանի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 01-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման 1-6 հավելվածների «օրենքների» և «օրենքի» բառերից առաջ հանել Հայաստանի Հանրապետություն բառերը ,

2) որոշման հավելված 1-ի «Իրավական ակտերի մասին » բառերից առաջ ավելացնել «Նորմատիվ » բառերը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.օգոստոսի 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» օգոստոսի 2018 թվական N 80-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչ Սոֆիկ Քիշմիրյանի և Մեսրոպ Անտոնյանի դիմումները ֆինանսական օգնության մասին, հաշվի առնելով նրանց ընտանիքների սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, ***որոշում եմ՝***

1. Մայակովսկի համայնքի 2018 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տալ դրամական օգնություն.

Սոֆիկ Քիշմիրյանին -20 000/ քսան հազար/ դրամ,
Մեսրոպ Անտոնյանին -20 000/ քսան հազար/ դրամ,
Ընդամենը 40 000 / քառասունսուն հազար/ դրամ :

2.Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.օգոստոսի 3